ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույնով հաստատում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝ «Լույսեր» ՓԲԸ (այսուհետ՝ Թողարկող) 2023թ. - ի երրորդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է «Լույսեր» ՓԲԸ ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների 2023թ.- ի երրորդ եռամսյակի զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Թողարկողի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը, որոնց հետ առնչվում է «Լույսեր» ՓԲԸ-ն:

Գրիգոր Չիչոյան	Տնօրեն		01/11/2023
Արամ Տիտանյան	Գլխավոր Հաշվապահ		01/11/2023

«Լույսեր»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 ԹՎԱԿԱՆ, Երրորդ եռամսյակ

«Լույսեր» ՓԲԸ

2023թ. 3-րդ եռամսյակային հաշվետվություն

Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել է ակտիվ գործունեություն, շարունակվել է շինարարական աշխատանքները և հաճախորդների որակյալ սպասարկումը: Հիմնվելով ընկերության ցուցաբերած արդյունքների վրա՝ կայացվել են հեռանկարային զարգացման որոշումներ՝ ընկերության գործունեության ընդլայնման, նոր նախագծերի մշակման ուղղությամբ:

Հաշվեկշռային հիմնական ցուցանիշներ

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ (30.09.23թ.) «Լույսեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) **ակտիվները** կազմել են 24.488 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ հաշվետու ժամանակաշրջանից ապահովելով 5.5% աճ: Աճը հիմնականում պայմանավորված է կառուցապատողի հատուկ հաշվի և ընկերության պաշարների աճի հետ՝ նախորդ կիսամյակի հետ համեմատ: Այսպիսով, ընկերության ակտիվների գերակշիռ մասը բաժին է ընկնում հաճախորդներից ստացված մուտքերին և պաշարներին, որոնք 30.09.2023թ. վերջի դրությամբ միասին կազմել են ակտիվների 85 %-ը:

Ընկերության **դրամական միջոցները** (բանկային հաշիվների տնօրինման համար ազատ մնացորդներ) երրորդ եռամսյակի վերջի դրությամբ կազմել են 90.6 մլն ՀՀ դրամ:

Ակտիվների աճին զուգընթաց կիսամյակի ընթացքում աճել են նաև Ընկերության **պարտավորությունները**՝ 30.09.2023թ. կազմելով 22.72 մլրդ ՀՀ դրամ:

Պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված է երկարաժամկետ պարտատոմսերի, ինչպես նաև գնորդներից ընթացիկ կանխավճարների աճի հետ:

Ինչպես ակտիվները և պարտավորությունները, **սեփական կապիտալը** նույնպես որոշակի աճ է գրանցել՝ 30.09.2023թ. դրությամբ կազմելով 1.76 մլրդ ՀՀ դրամ:

Ամփոփելով Ընկերության **համապարփակ ֆինանսական արդյունքների** ցուցանիշները՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ընկերության շահույթը կազմել է 59.57 մլն ՀՀ դրամ:

Դրամական Հոսքեր

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում դրամական հոսքերում նկատվել են որոշակի փոփոխություններ:

Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքերը եռամսյակի ընթացքում կազմել են մինուս 195.5 մլն ՀՀ դրամ: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գործառնական գործունեության զգալի մաս են կազմել հաճախորդներից ստացված մուտքերը՝ կազմելով 728.74 մլն ՀՀ դրամ, ինչը վկայում է ընկերության նկատմամբ հաճախորդների վստահության, վարվող ճկուն քաղաքականության և մատուցվող ծառայությունների որակի մասին: Սույն եռամսյակի վճարումները մատակարարներին կազմել են մինուս 1.12 մլրդ ՀՀ դրամ, ինչն էլ իր մեծ ազդեցությունն է ունեցել ընդհանուր գործառնական գործունեությունից հոսքերի վրա:

Ֆինանսավորման գործունեությունից դրամական զուտ հոսքերը 2023թ.-ի երրորդ եռամսյակի ընթացքում կազմել են մինուս 172.65 մլն ՀՀ դրամ՝ հիմնականում պայմանավորված պարտատոմսերի տեղաբաշխման, փոխառությունների, փոխառության և վարկի մարման, ինչպես նաև պարտատոմսերի և վարկերի գծով վճարված տոկոսների հետ:

Ներդրումային գործունեության հոսքերը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կազմել են 155.27 մլն ՀՀ դրամ՝ պայմանավորված կառուցապատողի հատուկ հաշվում առկա միջոցներից ստացված տոկոսի հետ:

Հետագա զարգացման նկարագիր

Առաջիկա ժամանակներում «Լույսեր» ՓԲԸ-ի հիմնական առաքելությունն է «Լույսեր» բնակելի համալիրի բարեհաջող ավարտը և հանձնումը, հաճախորդների, մատակարարների և այլ շահագրգիռ անձանց նկատմամբ պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարումը և որակյալ ծառայությունների մատուցումը:

Ընկերությունը մշտապես ուսումնասիրում է շուկան, սպառողների կարիքները և պահանջները՝ հետագա նախագծերի մշակման նպատակով: Այսպես, «Լույսեր» բնակելի նախագծից բացի, Ընկերությունը նախատեսում է իրագործել «Լույսեր» բազմաֆունկցիոնալ հասարակական կենտրոնի նախագիծը, որը մոտ 20 հազար քմ. ընդհանուր տարածքով շինություն է՝ ապահովված տարբեր ենթակառուցվածքներով:

«Լույսեր» ՓԲԸ

2023թ.

ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երևան-2023

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	**Ծան.**	**30.09.2023թ.**
Ակտիվներ		
Հիմնական միջոցներ		5,417
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ		-
Ներդրումային գույք		406,300
Հետաձգված հարկային ակտիվներ		-
Կառուցապատողի հատուկ հաշիվ		8,515,549
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**8,927,266**
Պաշարներ		12,290,840
Տրված կանխավճարներ		1,401,114
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր		1,778,578
Դրամական միջոցներ		90,593
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**15,561,125**
Ընդամենը ակտիվներ		**24,488,391**
Սեփական կապիտալ և պարտավորություններ		
Կանոնադրական կապիտալ		582,310
Կուտակված շահույթ		1,182,555
Ընդամենը սեփական կապիտալ		**1,764,865**
Վարձակալության գծով պարտավորություններ		-
Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ		2,318,400
Երկարաժամկետ պարտատոմսեր		2,875,474
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**5,193,874**
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր		11,594
Շահութահարկի գծով պարտավորություն		5
Վարձակալության գծով պարտավորություններ		-
Ընթացիկ կանխավճարներ գնորդներից		16,934,721
Երկարաժամկետ վարկերի կարճաժամկետ մաս		524,874
Երկարաժամկետ պարտատոմսերի գծով տոկոս		58,458
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**17,529,652**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**24,488,391**

Գլխավոր տնօրեն — Գլխավոր հաշվապահ

Գրիգոր Չիչոյան — Արամ Տիտանյան

01 նոյեմբեր 2023 թ

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	**Ծան.**	**01.07-30.09.2023թ.**
Հասույթ		-
Տոկոսային եկամուտներ կառուցապատողի հատուկ հաշվում առկա միջոցների գծով		133,497
Այլ եկամուտներ		-
Վարչական և այլ ընդհանուր ծախսեր		(63,245)
Ֆինանսական ծախսեր		-
Փոխարժեքային տարբերություններից օգուտ (կորուստ)		1,958
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		**72,210**
Շահութահարկի գծով եկամուտ (ծախս)		(12,645)
Շահույթ (վնաս) հարկումից հետո		**59,565**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		**59,565**

Գլխավոր տնօրեն

Գրիգոր Չիչոյան

Գլխավոր հաշվապահ

Արամ Տիտանյան

01 նոյեմբեր 2023 թ

ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	01.07-30.09.2023թ.
Գործառնական գործունեությունից հոսքեր	
Հաճախորդներից ստացված մուտքեր	728,740
Մուտքեր պետբյուջեից՝ մատակարարներին վճարված ԱԱՀ-ի վերադարձ	230,000
Այլ մուտքեր	-
Վճարումներ մատակարարներին և նրանց անունից	(1,112,959)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(36,727)
Վճարված հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ՝ բացի շահութահարկից	(4,000)
Վճարված շահութահարկ	-
Այլ ելքեր	(558)
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	**(195,504)**
Ներդրումային գործունեությունից հոսքեր	
Հիմնական միջոցների ձեռքբերումից ելքեր	-
Միջոցների սառեցում կառուցապատողի հատուկ հաշվում	-
Կառուցապատողի հատուկ հաշվում միջոցների գծով ստացված տոկոս	155,266
Ռեպոյի գծով տոկոսների ստացում	-
Ներդրումային գործունեությունից դրամական զուտ հոսքեր	**155,266**
Ֆինանսավորման գործունեությունից հոսքեր	
Պարտատոմսերի տեղաբաշխում	544,968
Բանկային վարկի ստացում	-
Փոխառության ստացում	-
Փոխառության և վարկի մարում	(639,398)
Վճարված տոկոսներ՝ վարկերի ,պարտ. և փոխառությունների գծով	(78,219)
Վարձակալության գծով պարտավորության մայր գումարի և տոկոսների վճարում	-
Ֆինանսական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	**(172,649)**
Ընդամենը դրամական զուտ հոսքեր	**(212,887)**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	103
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հուլիսի 2023թ	**8,818,926**
Դրամական միջոցների մնացորդն առ 30 սեպտեմբերի 2023թ	**8,606,142**

Գլխավոր տնօրեն — Գլխավոր հաշվապահ

Գրիգոր Չիչոյան — Արամ Տիտանյան

01 նոյեմբեր 2023 թ